



ԵՐԵՎԱՆԻ

Ս. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Գ. Ի. Ռ. Կ. Ա. Ն. Ե. Ի. Ք. Ա. Ղ. Ա. Ք. Ա. Կ. Ա. Ն.

ՄԱՍԻՍ կը հրատարակուի ի կ. Պոլիս, ամէն ամսոյ 1ին և 15ին:
Հասցէ՝ Կ. Պոլիս, Ղալաթիա Նորատունկեան խան:
Ձեռքէ կը ծախուի հատը 40 փարայ:

Բաժանորդագիրն
Պոլիս, տարեկան մէկ մէջիտ:
Գաւառները մէկ քառորդ ոսկի:
Օտար երկիրք, վեց ֆրանք:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արեւելի Ապրիլ 28ի թիւին մէջ հրատարակուեցաւ խմբագրական յօդուած մը «Հայ գաղթականութիւնը» վերնագրի ներքեւ: Յօդուածը դրուատելով Ամերիկայի հայ գաղթականներու գործունէութիւնը Ուսթըրի մէջ հայ մատուռ մը կանգնելու նպատակաւ, կը մտադրէ որ այս հայկական ազգասիրութեան և բարեպաշտութեան օրինակն ազգէ ուրիշ «հեռաւոր հայ գաղթականութեանց վրայ ունին այնպիսի կազմակերպետոյ ցաւելով կորսուած մօտ հայ գաղթականութեան»
Արեւել կը փափաքի է պատճառն որ էջմիա-

տորիարքարանը բան մը ըսեր փրկելու համար կորսուելու վտանգի մէջ գտնուող հայ գաղթականութիւնները:
Արեւել չըսեր մեր պաշտօնական մարմիններու անտարբերութեան պատճառը, սակայն կարծենք թէ զայդ գտնել դժուար չէ: Այդ գաղթականութիւնները քիչ մը ատեն եւս իրր հայ պահպանելու համար ծախս պէտք է ընել, առանց հաւոյթ ակնկալելու: Տեսնուած է Հայոց վանք մը, կամ հայոց եկեղեցականներու

միաբանութիւն մը որ դրամ ծախսն գործի մը որմէ դրամական չափ չկայ:

Սակայն եթադրելով թէ կարելի ըլլայ ընել կարենոր ծախսերը պահպանելու համար ի Թրանսիլվանիա, ի Ռումանիա և այլ ուրեք հայ գաղթականութիւնները, կրնանք յուսալ որ յաջողինք այդ հայ գաղթականութիւնները միշտ հայ պահել:

Առանց վարանելու կ'ըսենք թէ՝ անհնարին է յուսալ որ հայ գաղթականութիւններն հայ մնան: Պատմական և տընտեսագիտական օրէնքները կ'ապացուցանեն թէ՝ անոնք որ իրենց երկրէն ելլելով կը գաղթեն ուրիշ երկիր, կամ կը փճանան անսերունդ, կամ կը ձուլուին իրենց գաղթած երկրի ժողովրդի մէջ:

Այս օրէնքին կը հպատակին անոնք իսկ որք մեծ ազգերու կը պատկանին, և մեզմէ շատ աւելի նպատաւոր պայմաններու մէջ կը գտնուին իրենց ազգութիւնն յօտար երկիր անվթար պահել կարենալու համար: Բայց փճանալու օրէնքն անողոքելի է:

Երբ ժողովուրդի մը մէջէն խումբ մը անձեր կը դիմեն ուրիշ երկիր, բնական է հետեւցնել որ այդ երկիր կը գտնուի, գաղթականներու համար, լաւագոյն վիճակի մը մէջ քան թէ իրենց հայրենիքը: ապաքէն աւելի բարձր քաղաքակրթութիւն կը տիրէ հոն: գաղթականները այդ բարձր քաղաքակրթութեան զոհերն են:

Եւրոպական ազգերու քաղաքակրթութիւնը ակներեւ կ'ապացուցանէ այս ճշմարտութիւն։ Երկու երեք տարի առաջ Ֆրանսացի տնտեսագէտներ իրենց լուրջ յօդուածներու մէջ ջանացին համոզել Ֆրանսական կառավարութիւնը և Ֆրանսացի ժողովուրդը որ դիւրութիւն ընծայեն խտլացի գործաւորներու Ֆրանսայի մէջ հաստատուելու համար, մինչդեռ Ֆրանսա տարրեր կը մտածէր։ Այդ տնտեսագէտներէն մին, Բօլ Պօլիէօ, կ'ըսէր թէ Ֆրանսայի մէջ կը գտնուէին 1,425 000 օտարազգի գործաւորներ որք գաղթականներ են. այտք չէ հարկադրել այդ գաղթականներն հեռանալու Ֆրանսայէն։ Ատոնց զաւակները կամ թոռներն այլ եւս Ֆրանսացի պիտի ըլլան, պիտի ձուլուին Ֆրանսացիներու մէջ։ Եւ երբ Ֆրանսացիներու աճեցումը կը նուազի, արդեօք իմաստութիւն է կոյսնցնել մէկ միլիոնէն աւելի ապագայ Ֆրանսացիներ։

Պօլիէօի և ուրիշ տնտեսագէտներու համար, անտարակուսելի է թէ՛ այդ մէկ միլիոն օտարազգիները պիտի ձուլուին Ֆրանսացիներու մէջ։

Ո՛չ կրօնք, ո՛չ լեզու, ո՛չ ազգային զգացում կրնան արգելել այդ ձուլումը։ Ազգի մը պահպանութեան այդ գլխաւոր տարրերքները կրնան իրենց զօրութեան աստիճանին համեմատ, աւելի կամ նուազ ժամանակամիջոց մը պահպանել օտար երկրի մէջ գաղթական ժողովուրդի մը ազդութիւնը, բայց կորուստի օրն անխուսափելի է։

Եւ արդարեւ ի՞նչ պատճառ կայ որ ազգութիւն մը օտար երկրի մէջ պահպանուի։ Ազգութիւն մը կը պահուի իր հողին մէջ. անկէ դուրս գոյութեան իրաւունքը կը կորսնցնէ։

Խու՛մը մը մարդիկ սպրեւելով մի և նոյն երկրին մէջ և զանազան կապերով իրարու միացած ըլլալով կը կազմեն ազգութիւն մը. իւրաքանչիւր անհատ որ կը պատկանի այդ ազգին կը գտնէ այդ ազգութեան մէջ իր հանգստութեան, երջանկութեան, շահուն պաշտպանութիւնը։ Երբ անհատ մը, կամ անհատներու խումբեր առաջ կը հեռանան իրենց երկրէն, և կ'երթան ուրիշ երկիր մը, բնականաբար այդ երկրի ազգութեան մէջ կը փնտռեն իրենց

հանգստութեան, երջանկութեան, շահուն պաշտպանութիւնը. այտք է որ այդ ազգութեան հետ միանան այն կապերով որոյմով իրարու միացած են այդ ազգութիւնը կազմող անհատները։ Այս միութիւն որ կը կոչուի «ի մի ձուլում», անխուսափելի է։

Երբ մեր աչքին առջեւ բերենք հայ գաղթականներուն իւր հայ փճանալուն զանազան երեւոյթները, կը տեսնենք թէ այդ փճացում նախասահմանեալ օրէնքի մը համեմատ տեղի կ'ունենայ։

Գաղթական հայուն առաջին պարտականութիւնն է սորվիլ լեզուն այն երկրին ուր գաղթած է. և սորվհետեւ երկու լեզու միասին գործածել կարելի չէ, գաղթականին զաւակը կիսով միայն կը խօսի հօրը լեզուն։ Ի՞նչ բանի գործածէ. ո՞ր խօսի այդ լեզուն։

Գաղթականին զաւակը թերեւս տակաւին կին առնէ իր հօրը ցեղէն, իսկ թուր՝ կաշկանդուած չէ. նա կին կ'առնէ իրեն սրտին սիրածը կամ իր շահուն պահանջածը. հօրը ցեղէն ըլլայ թէ գաղթած երկրի ցեղէն, այդ հոգ չէ։ Ինչ որ ալ ըլլայ, այդ նոր ընտանիքն այլ եւս հայ չէ. ո՛ր երկրին որ է, այն երկրի ազգն է։

Կրօնքն ալ ազգութիւնը պահելու անգոր է։ Գաղթականը իր կրօնքին յարած է, զայն կը սիրէ — ընդունինք պահ մը թէ այս այսպէս ըլլայ — բայց իր զաւակը շատ պաղած է այդ սէրէն. իսկ թուր լոլորովին ցրտացած է։

Եւ ինչո՞ւ կը ցրտանան։ Կրօնք մը սիրելի է ու պաշտելի է ո՛չ միայն իր էութեան համար, այլ և այն՝ յիշատակներուն համար որոյմով կրօնասէրին սիրաբար կապուած է իր եկեղեցիներուն, իր վանքերուն, իր ուխտատեղիներուն հետ։ Ո՛չ մին այդ բանաստեղծական յիշատակներէ կը խանդաղատէ գաղթականի սերունդին սիրտը, աչքէ հեռու, սրտէ հեռու։

Մերկացնելով քրիստոնէական կրօն իր «տեղական գոյնէն» — որ ազգային գոյնն է, ամէն ուրեք կրնայ համարուիլ նոյն կրօնքը։ Հայուն թոռները կը գտնեն ուրմանական եկեղեցիին, կաթօղիկ եկեղեցիին մէջ նոյն քրիստոսը, նոյն Աւետարանը, որ ազգութիւն չունին։

վերցուր լեզուն, կրօնքը, ընտանիքը և հողը, ի՞նչ կը մնայ անդին:

Նոր հող, նոր լեզու, նոր ընտանիք, կը կազմեն գաղթականին համար ուրիշ նոր ազգութիւն մը:

Հարկ է ըսել թէ այդ ազգութեան փճացումը, որ անխուսափելի է, կրնայ քիչ մը ուշանալ պարագայներու բերմամբ: Այսպէս, օրինակի համար, երբ հայերը, բազմաթիւ խումբ կազմած, օտար երկրի մէջ միասին կը բնակին, միեւնոյն շահերով իրարու հետ կապուած, այն ատեն անոնց հայութիւնը բաւական ատեն կը տեւէ, թէպէտև շատ տկարացած: Բայց օրհասը պիտի հասնի:

Ամէնէն աւելի աչքի զարնող գաղթականութիւնը Ռումանիոյ Հայոց գաղթականութիւնն է. բայց ո՞րչափ վտանգեցաւ այդ հայութիւնը վերջին յիսուն տարիներու մէջ. կմախք մը գրեթէ:

Ռումանիացի հայ քահանայ մը, քանի մը տարի առաջ ինձ կը պատմէր թէ ի՞նչպէս քիչ ատենէն պիտի փճանան Ռումանիոյ հայութեան հետքերը: Կալացի չրջակայ գիւղերու հայերն իրենց մեռելները թաղելու համար ա՛լ հիմա ուուման քահանայներու կը դիմեն: Երբ ի Ռումանիա կրօնական ազատութիւնը կատարեալ չէր, յունադաւան ուուման քահանան արտօնեալ չէր կրօնական արարողութիւններ ընել ուրիշ կրօնքէ քրիստոնեայներու. իսկ հիմա ազատութիւն ունին այդ արարողութիւնները ընելու, երբ հարկ ըլլայ: Երբ հիմա կը մեռնի հայ գիւղացի մը, իր ընտանիքը չուզեր մինչեւ Կալաց լուր լրկել և հայ քահանայ բերել տալ: Հայ քահանան սուղ կուգայ. ճանապարհի ծախս կայ. աւելի ստակ վճարելու է. իսկ ուուման քահանան հոն է, ածան կուգայ, քանի մը Փրանքով գործը կը լմնցնէ: Ան ալ քրիստոնեայ է, կ'ըսեն հայերը, մեռնելէ վերջ ո՛վ կ'ուզէ թող թաղէ:

Թաղումէն վերջ կարգը կուգայ միւրտութեան, յետոյ պսակին: Ա՛լ ի՞նչ կը մնայ:

Գիշերուան միայնութեան ու լռութեան մէջ ծովուն վրայ կը խորհիմ այս խնդրին վրայ ու կը գրեմ: Քիչ ատենէն պիտի հասնիմ այն երկիրներն, ուր հա-

յութիւնը երբեմն ա՛յնքան կարևոր գաղթականութիւններ ունէր: Կարելի պիտի ըլլայ ինձ հայու մը հետքը գտնել:

Այդ ամէն հայերը երբ ելան իրենց երկրէն, սրտով ալ հայ էին, հոգևով ալ, կրօնամուլ էին: Եւ սակայն ոչ ուրեք կրօնքը զիրենք պահպանեց իբր հայ: Նախապաշարում է հաւատալ թէ կրօնքը ազգութեան մը պահպանն է ամէն ուրեք:

Եթէ հայ գաղթականութիւններու բեկորները պահպանել կ'ուզենք, միակ միջոց մը կայ. աշխատիլ զանոնք վերադարձնել հոն ուստից մեկնած են:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ՀԱՄԲՈՅՐԸ

. . . Սենեկին մէջ, ամէն բան տակն ու վրայ էր: Սառնիխուռն ցրուած թիկնաթոռներ, երկու երեք պարկ գիրք, սեղանի մը վրայ տասնեակներով մանր սըրուակներ, բաց դրաքարան մը, դարակներու վրայ բժշկական փայլուն գործիներ, նշգրտակներ, դանակներ, և այս ընդհանուր խառնաշփոթութեան մէջ կանգուն երսունեկինդ-քառսուն տարեկան երիտասարդ մը, որ՝ հապճեպով՝ պարկերուն մէջէն կ'առնուր գրքերը, կազմուած մեծադիր գրքեր, և մատենադարանին մէջ կը տեղաւորէր կարգաւ:

Անկիւնը, բազմոցին վրայ, ծերունի կին մը նստած էր, ճերմակ մազերով, եւ կը մրափէր: Գլուխը պզտիկ ցնցումներով հետզհետէ խոնարհելով, ընդոստ կը բարձրանար, և փակ արտեւանուէքը զարմացմամբ կը բացուէին՝ անհանդարտ ու խռուովեալ նայուածք մը նետելով չորս բոլորքը: Ետոյ դարձեալ, արտեւանուէքը կը գոցուէին և գլուխը կը վերսկսէր իր մեղմ վայրէջքը, մինչև որ կուգար իր ծրնօտը հանգչեցնել կուրծքին վրայ:

Մայիսի գիշեր մըն էր, ժամը երեքն անցած: Սեղանին վրայ բոցախալ լամպար մը կը լուսաւորէր այս տեսարանը, նշարակներուն պողպատին ցուրտ շողիւնը ցոլացնելով, ստուերի մէջ թաղելով սենեկին անկիւնները: պատին վրայ, ծերունի կնոջ գլխոյն ստուերը կը նկարուէր խօլական մեծութեամբ, անոր շարժումներուն հետ հետզհետէ տարածուելով ու կծկելով, քթին ու ծնօտին զուգահեռական անհեղեղ գիծերը երկնցնելով ու կարճեցնելով:

— Մայր, ըսաւ յանկարծ երիտասարդը, գնա՛ սպառիչ, հանգիստդ նայէ: Երկու օր է շատ յոգնած ըլլալու ես:

— Էյ «ն» գուն ալ, Տրդատ, հերիք է ատաղձը, քիչ մըն ալ վաղուան ձգէ, ըսաւ ծերունի կինը՝ աչքերը շիւղելով:

— Շիտակը, յոգնեցայ. հիմակ սա գիրքերը մէկգի ձգեմ, թուղթերս մինակ տեղաւորեմ, շատոնց է ասանկ երեսի վերայ մնացեր են, սրարապ տեղը տեղ կը բռնեն:

Եւ, գիրքերուն կոյտին տակէն, թղթերու խոշոր ծրար մը քաշելով, բացաւ զայն: Թուղթերը մէկիկ մէկիկ աչքէ կ'անցունէր, մէկ մասը կը պտտուէր կը նետէր և միւսները կը դնէր գրադարանին գզրոցին մէջ:

Երկու օրէ ի վեր, Տոբթոր Տրդատ Պարզեւեան իր ընտանիքով այդ տունը փոխադրուած էր, Բանկալթի շիտակ ճամբան: Մինչեւ այն ատեն Ենի-Պարու կը նստէր, այլ տակաւ իր գտած յաջութիւնն և աւելի բազմաթիւ յաճախորդներ գտնելու հաւանականութիւնն իրեն թեւադրէր էին այս տեղափոխութիւնը: Արդարեւ, առանց մեծ համբաւի մը տէր ըլլալու, բաւական համարում կը վայելէր միջնակարգ ընտանեաց մէջ, Թըպլիշէն էր, Բարիդէն չէր, բայց հոն ու վիշնա գտնուած էր: Բարձրահասակ երիտասարդ մըն էր, կապուտակ աչուրներով, որոց անուշ արտայայտութիւնն ամբողջ դէմքը կը համակէր հեղ ու արտում մտահոխութեամբ: Աղքատները կը սիրէին զինքն այն բարեհամբոյր ու մարդասէր բնաւորութեանն համար, որով տնակին դռնէն դուրս կ'ելլէր՝ առանց տանտիրոջ ձեռքը նայելու, և կարող ընտանեաց մէջ

կը յարգէին զինքն իր զգուշաւոր բնութեանն և անձնուէր եռանդին համար:

Իր ծերունի ծնողներուն և ամուրի քրոջը հետ կ'ապրէր, որոց հանգստութիւնն եղած էր առաջուրէն ի վեր իր միակ նպատակը: Աղքատ ընտանիքի զաւակ, իր ինքնօգնութեամբ անոնց տուած էր դիւրակեցիկ վիճակ մը, ու անոնց սիրոյն ու դուրգութեանքին՝ մէջ կը սահէին իր հանդարտ օրերը:

Ծրարին թուղթերը հետզհետէ կ'անցնէին իր ձեռքէն, և գրադարանին գզրոցին խորը կ'անհետանային, կամ իրենց պատուած կտորներուն դարձարձիկ անկումովը կ'երթային աւելցնել իր ոտքերուն առջեւ կազմուած խառնափնդոր կոյտը: Դեղնած ու ծակծկած թուղթեր կային ծրարին մէջ, հին նամակներ, այցաքարտեր: Անոնց պարունակութեանը վրայ արագ նայուածք մը՝ կը վճռէր իրենց բաղբը:

Հիմակ իր ձեռքն առած էր գունատ թղթերու բարակ ծրար մը, որ գորշ ժպտաւէնով մը կապուած էր: Անիւթութեամբ ժապաւէնը քակեց, բայց հազիւ նայուածքին հանդիպեցան այդ նամակներուն կիսովին աւրուած երկար ու բարակ գրերը, իր դիմագծերը կծկուեցան ցաւատանջ: Վայրկեան մը կանգ առաւ, յետոյ՝ անգիտակցաբար՝ աչքէ անցուց այդ նամակները, անոնց արթնցուցած բողբոսիւն յիշատակներուն մէջ մտացնոր, աւելի՛ ենթադրելով քան իրապէս կարգաւով անոնց ստորագրութիւնը, «Վերգին Միքայէլեան», և ընդոտ շարժումով մը գզրոցին մէջ նետելով այդ թուղթերը, պատուհանին քով գնաց և բացաւ զայն:

Դուրսը, խաւար կը տիրէր, այլ մայիսեան աստղադարձ երկնքի մը տարտամ ցոլացումովը մեղմացած: Թեթեւ հով մը կը փչէր, հեշտ և խնկարուրիկ, փայփայանքի մը պէս հաճոյական: Բժիշկը, պատուհանին քով կանգուն, սկսաւ մտածել, անցելոյն մէջ մոլորած:

Այո՛, այո՛, շատ սիրած էր այն աղջիկը: Իր չքաւոր և ախտատալի ուսանողութեան տարիներուն մէջ, ան էր եղած միայն իր յոգնութիւնը մոռցնող ու իրեն արութիւն ներշնչող պատկերն: Կը յիշէր

անոր նուրբ ու փափուկ դէմքը, որ իր մտքին մէջ մնացած էր անեղծ ու անջինջ, ու մանաւանդ անոր լայն ու վճիռ աչուքները, իրենց սեւորակ սպիտակուցին մէջ տարօրէն իմն մեղմադձիկ ֆաներկու տարեկան էր ան, ու ինքը քսանեւոր տարեկան, Լուրջ ու խորին զգացում մըն էր իր սէրը: Վկայականն ստանալուն կ'սպասէր որպէս զի կնութեան խնդրէր Վերգինը իր հօրմէն, ճերմակեղէնի խանութպան մը՝ որ մեծապէս կը յարգէր զինքը իր սարկեշտ բնաւորութեանն համար: Եւ ահա օր մը մօրմէն խմացած էր թէ «Վերգինին համար շնորհքով ուղղով մը ելած էր», լաւ կացութեան տէր օսկերիչ մը: Տրդատ մօրը բան մը զուրցած չէր իր սիրոյն և դիտաւորութեանն համար: Այս լուրը չ'վրդովեց զինքը, վստահ էր թէ Վերգինն պիտի մերժէր: Եւ սակայն քիչ օրէն նշանախօսութեան լուրն ալ առաւ: Դիմում մը, ձեռնարկ մը չ'ըրաւ Վերգինի ծնողաց մօտ: Կը ճանչնար ճերմակեղէնի խանութպանը, անշուշտ բժշկական ուսանողին աղքատիկ ներկայէն ու անստոյգ ապագայէն նախամեծար պիտի համարէր այդ օսկերիչին դիւրակեցութիւնը: Իր վիշտը սրտին խորը թաղեց, սիրոյ վիշտ ու արժանապատուութեան ալ վիշտ, ու ըզգուշացաւ կրկին անգամ տեսնելէ այդ աղջիկը: Դառն զարմանք մը ունեցաւ միայն, ու անոր այդչափ դիւրաւ հաւանելուն համար արհամարհոտ կարեկցութիւն մը: Վերջէն միայն խնայաւ թէ հօրը եւ աղջկան մէջտեղ ծանր կռիւներ տեղի ունեցեր էին, որոց մէջ սակայն յաղթուողը աղջիկն էր եղած: Իր սրտին բոլոր խանդաղատանքն իր դասերուն տուաւ, և իր ուսմանց տաժանելի աշխատութեան մէջ մոռցաւ իր սէրը: Տարիներով սակայն, երջանկութեան և անդորր կեանքի այն հեռապատկերը զոր իր մտքին մէջ ծրագրած էր՝ մերթ Եւրթ եկաւ իր խորհուրդները խռովել: Շատ կիներ և շատ աղջիկներ ճանչցաւ, ու ոչ մէկուն մօտ ունեցաւ իր երիտասարդութեան առաջին տարիներուն զգացմանց սրբութիւնը: Մայրը միշտ հետամուտ էր զինքն ամուսնացնելու, և ինք միշտ կը յետաձգէր: Տակաւ առ տակաւ՝ մոռցած էր այն աղջկան վարմունքին անազնութիւնը, ու կը յի-

շէր միայն անոր նուրբ ու փափուկ հոգին՝ իր դիւրարեկ ու գիրդ պատեանին մէջ, ու ամէն անգամ որ մայրն ամուսնութեան խնդիրն առաջ կը քչէր, մտքովը յետադարձ ակնարկ մը կը նետէր այն խուսափուկ պատկերին: Հարցուցած փրնաւած չէր թէ ի՞նչ եղած էր Վերգին իր ամուսնութենէն յետոյ: Հարս դացած էր հեռաւոր թաղ մը, ինք վկայականն ստանալէն յետոյ Պոլսէն հեռացած էր բաւաւ կան ժամանակ բժշկական պաշտօնով, դարձին՝ լուր մը առած չէր անոր նկատմամբ, տարիները եկեր անցեր էին՝ իրենց հետ բերելով նոր հոգեր ու նոր մտածութիւններ, և ահա հիմակ այդ դեղնած թղթի կտորներն իր մտքին մէջ կ'արթնցնէին հեռաւոր յիշատակներ, հովմոյն պէս որ մօթին խաւերը կը տարտղնէ՝ երեւան բերելով անոնց տակ ծածկուած կայծը:

Յանկարծ դուռը զարնուեցաւ ու զնօրէն: Բժիշկին ասդին դարձաւ, եւ ծերունի կինը, որ այս անգամ ալ խոր քնով կը քնանար, գլուխը վեր նետեց ընդօստ, մրմնջելով.

— Ո՞վ է աս ատեն:

Յաջորդ վայրկենին սենեկին դուռը բացուեցաւ և իրենց սպասաւորն երեցաւ.

— Դուռը ո՞վ է, Մինաս, հարցուց բժիշկը:

— Մէկը եկեր կը հարցունէ՝ որ նոր եկած տղթորին տունը ա՞ն է: Ես ալ հաւսի:

— Էյ ի՞նչ կ'ուզէ:

— Հիւանդի համար եկեր է, «ձե՛կ է, պիտի առնէ տանի ձեզի:

Բժիշկը սրանեղութեան չարժու՞մ մը ունեցաւ:

— Հեռո՞ւ տեղ է եղեր:

— Ձէ՛, հոս մօտը, վարի փողոցը:

— Ելիր գնա, օգը շատ ազուր է, խերու տէր կ'ըլլաս, ըսաւ ծերունի կինը, որ կը տեսնէր իր որդւոյն դժկամակութիւնը: Ես հոս կ'սպասեմ՝ քեզի: Ո՞վ գիտէ ի՞նչ վիճակի մէջ են որ ասանկ ատեն փողոցներն ինկեր են:

Յետոյ, սպասաւորին դառնալով,

— Մի՛նաս, ըսաւ, լապտերը վառէ՛ եւ աղայիդ հետ մէկտեղ գնա:

Բժիշկն ալ չդիմաւորեց և վերարկուն

ու գլխարկն առնելով սանդուղներէն վար իջաւ: Դրանք առջեւ երիտասարդ մը կը սպասէր, այլալած դէմքով:

— Գործիք մը բան մը տունելու պէտք կ'այ, հարցոց բժիշկն երիտասարդին:

— Չէ, տոբթոր, սլառասլանեց միւսը:

— Երթա՛նք: Ի՞նչ է հիւանդութիւնը:

— Կուրծքի հիւանդութիւն, տոբթոր: Երեք ամիս է անկողինն է: Տոբթորը եկաւ առջի իրիկուընէ, բայց հիմակ յանկարծ շատ աւրուեցաւ, խնայեց էինք ձեր հոս եկած ըլլալը, անմիջապէս խելք ըրինք ձեզի դիմելու:

Եւ անխօսուկ շարունակեցին իրենց ճամբան, Մինասին լապտերին լուսովը լուսաւորուած: Երկու երեք քայլ յետոյ կանգ առին մեծ տան մը առջեւ, եւ երիտասարդն իրարու վրայ հնչեցուց դրան վանդակը: Դուռը բացուեցաւ, եւ տարիքոտ մարդ մը, աչուըներն արցունքով լեցուն, բժիշկն առաջնորդեց մինչեւ մեծ սրահի մը դուռը, բացաւ դայն, եւ խղզուկ ձայնով մը որ դժուարաւ կը խուսափէր կոկորդէն,

— Հոս է հիւանդը, Կինս է: Աստուծո՛յ սիրուն, բան մը ըրէ, տոբթոր, ձեռքէ կ'ելլա՛յ կոր:

Լայն սենեակ մըն էր, լուսամտիով ծածկուած լապտերի մը աղօտ լուսոյն անուերներովը լեցուն: Վարագոյրները գոց էին: Սենեկին մէկ անկիւնը, անկողին մը կը գտնուէր, ու քովը ջահակալ մը՝ դեղի սրուակներով, դգալներով, փոքր տուփերով բեռնաւորեալ Անկողին մէջ, սպիտակ ժանեակներով եզերեալ բարձին վրայ գլուխն հանգչեցուցած էր կին մը, կիսախուփ աչուըներով, անսահման յոգնութիւն նկարուած իր ներսքաշուած դիմագծերուն վրայ: Դէմքը մեղրամոմի սպիտակութիւն ունէր, եթերային ու աննիւթ գոյն մը, որ ա՛լ այս աշխարհէս չէր: Իր գիշերազգեստին բացուածքէն վզին սփոյնները հերեւա-յին դուրս ցցուած ու անոնց քով խռոչներ յորս մտնելը կը կախուէր թուրքէն:

Տոբթոր Պարգեւեան մօտեցաւ, գորգին վրայ ծուռ դրաւ և երբ իր նայուածքն յառեցաւ այդ դէմքին վրայ, իր բարոյական բոլոր քաջութեանը պէտք ունեցաւ, որպէս զի մարմնքի «ա՛հ» մը չարտասանէ: Բայց այդ կի՛նը, կը ճանչնա՛ր,

իր Վերգինն էր. այդ դիմագծերը, թէև ոգեւորին ճգնաժամին մէջ գերագոյն նիհարութիւն մը առած, կը պահէին միշտ իրենց նախնի գեղեցիկ անուշութիւնը եւ աչուըները նոյն այն խռովիչ ու սեւաթոյր նայուածքն ունէին որ իր մոքին ալուցը մէջ կենդանի մնացած էր: Ժամանակ չունեցաւ սակայն շարժում մը ընե-լու:

Հիւանդն սթափած էր. իր նայուածքը չորս կողմ պտտեցնելէ ետք, անբացատրելի դարմացմամբ յառեց բժիշկին վրայ: Իր վրիպուկ խնայականութեան սլացմանը մէջ ի՞նչ յանկարծական ցնցում արթնցուց իր ուղեղին արդէն թմրեալ կարողութիւնները, իր կեանքին անէացմանը մէջ ի՞նչ գերբնական ոյժ գտաւ՝ իր մեռած ումներն ամփոփելու և կեդրոնացնելու համար: Ոչ ոք կրնար ըսել, Բայց գլուխը ետ ետ դնաց, աչուըները շողացին խնդալիւր ճառագայթացմամբ, շրթները բացուեցան՝ մանկական ժպիտ մը ուրուագրելով, «ա՛խ, Տրդա՛տ» միմնչեց նուազ ձայնով մը զոր բժիշկն աւելի՛ գուշակեց չրթանցը շարժումէն քան խնայաւ և որ տաք շունչով մը գգուեց իր այտերը, և հուսկ յետին ճգով մը իր թեւերը երկնցնելով, Պարգեւեանի վզին փաթթեց դայնս, գլուխը վար քաշելով, այնպէս որ անոր չրթուքը եկան հպիլ իր չրթանց, իրենց տամուկ տաքութեանը մէջ խառնելով իրենց վերջին համայրը:

Երբ բժիշկն իր գլուխն աղատեց այդ գերերկրային կաշկանդումէն, մահուան ցուրտն զգաց արդէն այդ մարմնոյն չօշափմանը մէջ: Ոգեւորը մեռած էր: Իր դէմքին վրայ խաղաղաւէտ անդորրութիւն մը կը տիրէր հիմակ, անձառ երանութիւն մը գերաշխարհիկ՝ որ խնդուն հանգստութիւն մը կը պարգեւէր այդ մաքուր դիմագծերուն, ցաւի հետքն իսկ չ'իթողով, եւ իր բաց աչուըները՝ գերագոյն վայրկեանին շղթաւացմանը մէջ արձանացած՝ անշուն նայուածք մը ունէին, աշխարհային իրերէն վերացած, իրենց ապակեղման անշարժութեանը մէջ արտայայտելով սրտին վերջին հրճուանքը: Պարգեւեան նայեցաւ բոլորով, ոտք ելաւ՝ իրականին գիտակցութիւնը կորուսած երազատեսի մը պէս, իր ետին հաւաքուած մէկ քանի

մարդոց ու կանանց հեկեկաձայն լացը դիտեց, եւ անվստահ քայլերով սենեկէն դուրս ելաւ, սանդուղներէն վար իջաւ, եւ դուռը բանալով դուրս նետուեցաւ առանց նայելու Մինասին որ վերարկուն ձեռքը կ'սպասէր եւ որ բան մը չհասկնալով իր տիրոջը վարմունքէն՝ լապտերը չը վառած անոր ետեւէն վազեց, վերարկուն թեւին վրայ, առանց համարձակելու խօսք մը ընել։ Երբ տուն հասան, բժիշկին իր սենեակը ելաւ նոյն մեքենական շարժումով։

Դրանք բացուածքէն, բժիշկին մայրն արթնցաւ իր մրափէն, ոտք ելաւ եւ տըղուն մօտենալով,

— Է՛յ, ի՞նչ է եղեր, Տրդատ։

Երիտասարդը պատասխան չը տուաւ, այլ բազմոցին մօտ երթալով, հոն ինկաւ զանգուածի մը պէս։

Ծերունի կինը, դող ելած, գաւկին քով դնաց։

— Ի՞նչ է ան, ի՞նչ ես եղեր։ Դուն շատ աւրուած կ'երեւաս կոր, երեսդ պատ է դարձեր, մոխիր կտրեր ես, ըսէ՛, ի՞նչ ունիս։ սիրտդ կը խառնուի։ Ի՛նչա՞նք մը չինե՞մ։ ճամբան վախցա՞ր, չէ՛ նէ մի սիրտը գէշ եղաւ, տակնուվրայ եղար, հիւանդը շատ գէշ էր։

— Ձէ՛, մայրիկ, չէ, բան մը չունիմ, անհանգիստ մի՛ ըլլար, ըսաւ վերջապէս Պարզեւեան։

Ծերունի կինը բան մը չ'ըսաւ, իր մայրական խանդաղատանքին մէջ զգալով թէ այդ պահուն պէտք չէր շատ կրկաել անոր ներսի դին։ Բազմոցին անկիւնը նըստաւ, գաւկին գլուխը իր ծունդին վրայ տաւ, եւ սկսաւ մեղմիւ չիեւ անոր՝ հըրատապ ճակատը, Մերթ ընդ մերթ, երիտասարդին կուրծքէն տկար հառաչ մը կը թռէր, ու անդամները կը ցնցուէին ջրածգաբար։

Յետոյ քիչ քիչ, շնչառութիւնը մեղմացաւ, շարժումներն հանդարտեցան, դէմքը վերատին դասաւ իր սովորական արտայայտութիւնը՝ քիչ մը աւելի տխուր միայն, եւ մօրը ձեռքին ճարտար շիւումին տակ՝ որ կարծես անդորրութեան հոսանուտ մը կը ներարկէր իր մէջը, աչուքները դոցուեցան եւ քնացաւ։ Մարմինը միանգամ հաս ի դործ կը դնէր իր իրա-

ւունքները, մտքին թողլով թաւալել իր սպառիչ յոյզերուն ու տագնապներուն յորձանքն յարատեւ եւ յարանորոգ։

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

ԱՅԱ ԹԷ ԻՆՉՈՒ...

Առ * * *

Երբ Տէրն բստեղծեց վարդն անուշաբոյր,
«Սիւսէ՛ ա՛մէն տեղ հոտդ» ըսաւ անոր։
Եւ երբոր շինեց Արեւն ոսկեթոյր,
«Ծագէ՛ դու, ըսաւ, լոյս տո՛ւր ա՛մէն օր։»

Երբ Տէրն ըստեղծեց արտուտիկն ուրախ,
Ըսաւ. «Ձայնդ երգէ՛ թող միշտ ներ-
դաշնակ։»

Երբ վառեց Լուսինն երկնից մէջ առկախ,
Ըսաւ. «Սիրողաց ժպտէ՛ շարունակ։»

Տէրն երբ շինեց Կինն-հրաշակերտն-ըսաւ.
«Սիրուէ՛ եւ սիրէ՛ հոգւովդ բոլոր,
«Սիրալուք ծո՛ւ մ'ըլլայ անեղոր եւ անբաւ.
«Ոյր ալիք՝ սիրոյ կարգան մեղմ օրօր...»

— Երբ շինեց ըզքեղ, պէ՛րճ դըլուխ գոր-
ծոյ,
Հրեշտակք ըզգացին նախանձ, կիրք ու
ցաւ...։

Եւ Աստուած՝ պրտիդ՝ զոր դրաւ ի քո՝
ծոյ՝

Իւր այն սուրբ պատուէրն աւանդել մու-
ցա՛ւ...։

Ահա՛ թէ ինչու, երբ ցնծան այերբ,
Երբ արեւ, լուսին թափեն վառ լոյսեր,
Երբ վարդն հեղու բոյր, թռչունն՝ ալու
երգ,

Դու, կի՛ն անըզգայ, չէ՛ս ժպտիլ տա
Սէր...։

ԱԼՓԱՍԼԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԿԵԱՆՔԷՆ

ՂԱՉԱՐ ՂԱՐԱԿԵՏ

ՂԱՐԻՊԻՆ ՀԱԽԸ ԶՈՒՏՈՒՆԻՐ

Աւուր մէկը, — չգիտեմ ո՛ր տարին, — աղաչելու կ'երթայի Պոլսի Մեծ Պատրիարքին՝ մեր Ղաչար վարպետի համար։ Աղաչելու անվարժ, այդ մարդուն ճշգրիտ պատմութիւնը միայն ըրի, և յաջողեցայ Անոր միջնորդութիւնը ձեռք բերել ի նըպաստ այդ արհեստաւորի դատին։ Թուղթ մը գրեց իր իսկ սուրբ գրչովը ու բառերովը, որպէս զի գիւանատունէն ոչ ոք տեղեկութիւն ունենայ։

Յուսով դուրս ելանք Պատրիարքարանէ, ուր յուսով կը մտնէինք երբեմն, եւ Ղաչար վարպետ, Հայոց Մեծ Պատրիարքին աղաչանաց թուղթն ի ձեռին, ուղղուած առ ունեւոր ազգակից մը, մոռցած էր քանի մը ժամեր երեք տարուան քաջած տառապանքը։ Վերջին և միակ փորձն էր այս, որուն կրթնած էինք արդար պահանջքի մը համար, կարօտով, տարիներով, կեանքով չաղուած, գոյացած գումարի մը համար։ Թուղթն իր հասցէին կը արուի, և Ղաչար վարպետ անգամ մըն ալ կ'երեւի դողդողալով իր Աղային, բայց անօգուտ։ Երկաթի փականքներ գթութիւնը կղպած էին կակուղ բազմոցին, ոսկիներու եւ առձեռն հեշտութեանց մէջ։— «Այդ շանն ըսէք, թող մէկ ալ տանս դուռը չգայ, ես այդ կարգի հաշիւներ չսւնիմ»... Վարպետը կը դառնայ խան, անմուռնչ և դուցէ անտրտունը։

Մինչեւ այդ վերջին փորձը տարիներ անցեր էին։ ամէն աշուն իր բարեկամներուն ուղեկից կ'ըլլար մինչեւ Տրապիզոնի շոգենաւը, որ այդ եղանակին, անձրեւի, յուսոյ և սիրոյ օրերուն, մեր պանդուխտներուն սիրտը թունդ կը հանէ Պոլսոյ նաւահանգստին մէջ։ ամէն անգամ իր տունը խնդութեան լուրեր զրկած էր, և «այսօր կուգամ, վաղը կ'երթամ» ըսելով, ինքզինքը գտած էր երազներու քանդուածոց մէջ, խոնաւ զննանը նետուած հէգ կալանաւորին պէս։ Այդ օրէն ան-

դին, մինչեւ իր օրհասին ժամը, ոչ ոք լսած էր իր բերնէն «Կէ հազար առնելիքս»։

Ա

Վարպետ Ղաչար աջող գործաւոր էր, մեծ շինութեանց ու մեծ վարպետներու մէջ կնքեւորութիւն ստացած։ ստորագրածներ ունէր, պատուոյ և մեծարանքի մարդ էր իր շրջանին մէջ։ «Հիներէն մընացած է»։ այսպէս կ'ըսէինք։ «անխառն մարդ» իր ճշգրիտ սահմանն էր։ բընութիւն և մարդկային ընկերութիւն չէին կրցած չարութիւն դնել ի նմա։ Ոոչոր էր մարմնով ու հաւատքով, ձայն, ձեռք, թիկունք, գլուխ, ոտք, ամէնն ալ իրարու պատշաճ։

Վարպետներն իրենց ստորագրածներու մասին շատ պարտքեր ունին, անոնց մէջ յարգանք վայելելու համար՝ պէտք է որ ճշդիւ ի գործ դնեն իրենց մեծութեան պարտականութիւնը։ Վարպետ Ղաչար գիտակ էր իր պարտուց և ճշդիւ գործադրող։ իր գործաւորները կը հոգար, անոնց չաբաթական ծախուց դուրսը կը հատուցանէր ամէն կիրակէ։ արտաքոյ կարգի նեղութեանց մէջ անոնց կը հասնէր։ կրնար պատահիլ որ, — որովհետեւ ո՛ւշ ուշ ստակ կ'ստանար Աղայէն, — պարտքով, տոկոսով դրամ առնէր և բարոյական պարտքի տակ չմնար, պահելու իր պատիւը, իր Աղային պատիւը, որուն ի սրտէ եղած էր բաւարանուէր, անխարդախ բնութեամբ, գործաւորներով, արհեստով և վստահութեամբ։ Մեծ շէնքն ի գլուխ կ'էնէ, Աղային տունն ու տեղը, անձն ու գանձը դեղին ոսկիներով կը յըջ փանան, և մեր Ղաչար վարպետ թուղթ մը կ'ունենայ ի ձեռին՝ մաքուր գրով նըշանակուած «Կէ հազար դահեկան»։

Այդ չարաչուք օրէն սկսեալ, «այսօր գնա՛, վաղն եկուր»ը բնաւ չհատնիր, որով այդ մարդուն կեանքին մէջ յառաջ կուգայ տարտամութիւն մը, տեսակ մը կաշկանդում սրտի եւ հոգւոյ, ոտքի ու ձեռքի։ Ինչ անգամ կարող եղաւ գործ բանելու վստակածն ալ, եթէ երբեք կարելի ըլլար, ստիպեալ էր տալ իր վարպետներուն, զորս ինք աշխատելու տարած էր իբրեւ միակ պատասխանատու։ իր գործաւորնե-

րը զինքը միայն կը ճանչէին, և ինքն իր Աղային անգթութիւնը չունէր բնաւ: Այո, տուած էր միշտ իր շարաթական ծախքերըն ալ թեթեւցնելով. իսկ եթէ դրամ պակսէր, կը հանէր իր դատարկ քսակն, եւ ԿԿ հազար պահանջքի թուղթը, որուն վրայ կը գուրգուրար հոգւով մարմնով, ցոյց կուտար անոնց: Օր մը ո՛չ դրամ ունեցած էր տալու՝ եւ ոչ ալ թուղթն՝ ի տես հանելու կարող եղած: «Առա՛ծ է» կ'ըսեն միարեան, և հէք մարդն անտըրտունջ լսելով ամեն նախատական խօսքեր, յանձն չառնուր ըսել, որ Աղան «հաշիւը տեսնեմ» ըսելով՝ թուղթը ձեռքէն կորզած էր, պատուած, եւ այսպէս հաշիւը կարգադրած, անգթաբար նետելով զինքը գործաւորներուն կծու կծու թշնամանացը մէջ: Այս էր իր առնելիքին պատմութիւնը. վերջին փորձն ըրինք Մեծ Պատրիարքին ինքնագիր թղթովն. և վարագոյրը կ'իջնէ առաջին Արարուածին: Ի՞նչ եղաւ այնուհետեւ այդ մարդը:

Բ

Անկարծելի փոփոխութիւնք մեր վարպետին ճակատագրին մէջ՝ տակաւ ձածողւածները մէկմէկու վրայ բարդեցին: Գլուխ գործաւորաց եղած էր տարիներով, պարտուց դիտակ եւ ուղղամիտ ճանչցւած, իսկ այնուհետեւ ինկաւ, վա՛ր ինկաւ, հասարակ արհեստաւորէն ալ վար. երես դարձուցին իրեն ամէն ծանօթներն ալ, իր գեղեցիկ եւ բարենշան օրերուն պէս: Թող որ շահեկան գործի գլուխ չը կրցաւ գտնուիլ, շատ անգամ իր գործաւորներուն հետ, որոց գործ կը գտնէր, ստակ կը շահեցնէր, փայտ տաշելու անգամ չէր տարուեր: Վարպետ Ղազար ինկա՛ւ, անկանգնելի ինկաւ: «Ապուշ եղեր» է կ'ըսէին: Ի՞նչ չ'ըլլար մարդ ճակատագրի այդ ուժգին բաղխումներուն մէջ: Գործաւորն իր պահանջքը, վաշխառուն իր առնելիքը կ'ուզէր. դուրս կը ձգեմ իր տունէն եկած արիւն արցունքով գրուած լալկան նամակները. ինքն ալ, իբրեւ մարդ, պէտքեր ունէր, սենեկի ծախք, ծխախոտի դրամ, լուացքի ստակ. եւ ասոնց փոխարէն բոլոր բովանդակ ունեցած էր արհամարհանք իր արհեստակցացը մէջ, վարկի ջարդ, 50 տարիք եւ ԿԿ հազարի

պահանջը, զոր, ինչպէս տեսանք անտըրտունջ թողած էր իր ետեւ և խան դարձած ցաւագին:

Մէկ բան կայ որ համեմատաբար առաւել անտանելի է մարդոց. վերէն գլորիլ, եւ ունեցածը կորսնցնելով՝ դատարկութեան մէջ նստիլ: Այդ վիճակին էր հասած մեր վարպետը, բնութեամբ խորիւտ, նուաստանալու անընդունակ:

Անիծեալ օր մը իր խանը կը մտնէի. տեսայ այդ մարդն, որ թեւերը սոթտած, տաշտի մը վրայ կորացեալ, իր լաթերը կը լուար՝ քրտինքն երեսին եւ ամօթոյ շառագունանքն իր թառամ այտերուն եւ խոնջ ճակտին վրայ: Չուզեցի իրեն երեւիլ: Երկու ժամ ետքը գտայ զինքն իր սենեկին մէջ՝ կրթնած իր անկողին: Բարեւէ մը ետքն, իր հաւ կը հարցնեմ, եւ տակաւին կը գտնեմ զինքը Աստուծոյ վրայ դրուած: — «Փառք Աստուծոյ, ի՛նչ ընեմ. կ'իյնամ, կ'ելնեմ, տեսնենք Տէրն ի՛նչ կ'ընէ: — Հաշիւներդ ի՞նչ եղան: — Կարգադրուած են, Աստուած Աղային կեանք տայ, իր տունն ու տեղը, կ'ինն ու զաւկները պահէ: Անգրագէտ մարդն այս հեգնութիւնը կ'ընէր. և ինձ այնպէս իմն թուեցաւ որ նոյն պահուն կայծակը բոցաթեւ կը պտտէր սենեկին մթնոլորտին վրայ:

«Աստուծոյ վրայ հաւատքդ չէ փոխուած, այնպէս չէ՞, վարպետ» — «Ո՛չ, ամենեւին ոչ» ըսելով սկսաւ նոր պատմութիւն մը ընել ինձ այս յառաջաբանին տակ թէ Ղաբէյին հաւել շահաւոր: Պատմութեանը ես ալ գիտակ էի: — Պանդուխտ մը, սալասելէն ճարը հատած, իր պահանջքը ուղեւու կ'երթայ օր մը: Թախանձանքը կ'երկարէ քիչ մը. Մեծին տղան, որ, քանի մը օրերէ ի վեր, հիւանդ ինկած էր գլխու թեթեւ ցաւով մը, կատաղած վար կ'իջնէ. իր ձիապանին բռնել կուտայ այդ խեղճ մարդը, չարաչար կը խարազանէ, և այդպէս, կողերը քրքրուած, դուրս կը նետէ: Դրան վրայ կը բացուի տեսարանին սրտառուչ մասը: Մարդը կը դառնայ տանը դէմ, գլխարկը վար կ'առնէ, աչքերը պատշգամբին թըրթռուն վարագուրներուն և սիրտն Աստուծոյ ուղղած, քանի մը կրակոտ բառեր կը իրէն դէպի վեր, «Աստուած տեսնէ մեր

դատաստանը, երկու տարի է որ տունէս տեղէս կարօտ թողուցիք», ըսելով գըլ-խարկը կը դնէ, և հոկտեմբերի անձրեւն ու խարազանի հարուածը շալիած կը մեկնի: Դրացի տիկին մը, Ե. Ս. որ հանգիստտես եղած էր այդ տեսարանին և աւանջալուր խարազանի անողորմ հարուածներուն, կը փութայ իրենց տանը միւս կողմն ընդ որ մարդը պիտի անցնէր, նըշանացի կը կոչէ պարտիզին դուռն, եւ քանի մը թեթեւ հարցումորձէ ետքը, չորս մէճիտ և թօփ մըն ալ ճերմակ կը տաւ կուտայ:

Այս դէպքին վրայ չորս օր կ'անցնի. բժիշկներու անողք վճիռը Պոլսոյ մէջ իր չարաչառի լուրը կը տարածէ: Հինգերորդ օրը մեր եկեղեցեաց պատերուն վրայ կը փակցեն մահադոյժ մը «հոկտեմբերի 1... 188... թաղման հանդէսը պիտի կատարուի ի ժամ 7^{1/2}»: Այդ թուղթը կարգացի ես ենի. Բարուի Հայոց եկեղեցւոյ դրան վրայ, դառն կսկիծ մը ունեցայ, զի մեռնողն երիտասարդ էր, տարեկից ու ծանօթ:

Թաղմանը փութացինք. պերճ դամբանական, թաւշեայ սեւ ծածկոյթ, ծաղկեայ պսակներ, խառնամբոյս բազմութիւն, արցունք, հաւաչանք, ոչ մին պակսեցաւ վաղամեռիկ երիտասարդին. չպակսեցաւ իր պահանջքին տէրն, որ եկած մօտձ էր յուղարկաւորաց մէջ, յարդանք մատուցանելու իր Աղայի դաւկին անշուք մարմնոյն, քառութիւն եւ թողութիւն հայցելու իր անվճար մնացած պահանջքին և յանիրաւի կերած խարազանի չարագան հարուածներու մասին: Այս պատմութիւնն յիշեցուց ինձ Ղազար վարպետ և յառաջաբանը՝ վերջաբան դընելով կնքեց «Ղարիալին հախը չուտուիր»... իր սփոփանքն եղած էր այս:

Գ

Տարիներ անցան, եւ մեր Ղազար վարպետ կ'ապրէր այդ դրութեան մէջ, անօգուտ իր անձին, անօգուտ իր տանն ու վաւկներուն: Նամակ գրեցին իր տղուն, որ փութայ Պօլիս գալու: Մանուկ եկաւ, գտաւ իր պատուական հայրն անտանելի տառապանքներու մէջ: Բայց

ի՞նչ կարող էր ընել. ոչինչ. մանաւանդ թէ ինք նորեկ էր, խնամքի պէտք ունէր, աշկերտ պիտի ըլլար, արհեստի պիտի վարժուէր, եւ այնուհետեւ, եթէ յաջողութիւն ունենար, պիտի կարենար ըսել իր սիրելի հօրը, թէ Հայր, ալ մեղք ես դու, ծերացար գրեթէ, հայրենիք զըրկեմ գրեղ:

Յաջողութիւն չեղաւ, ապրեցան միայն հայր ու դուստի: Ձմեռ մը, չարեքչարթի օր, վարպետ Ղազար, արդէն տկար եւ հիւանդագին, ճամբայ կ'ենէ Լանկայէն. դէպի հիւանդանոց: Խեղճը կէս ճամբան նուազեալ կ'իյնայ տղմոտ գետնի վրայ: Հայ կին մը դիպուածով վրայ կը հասնի անմիջապէս, եւ տեղեկանալով իր խանին անունը, կառք մը կը վարձէ և կը ղրկէ հոն: Խանէն վերստին ճամբայ կը հանեն դէպի հիւանդանոց: Ներս կ'առնուի, լաթերը կը փոխեն, և անունը կը հարցնեն: — «Ղազար Յակոբ» հազիւ արտասանած կը մեռնի:

Ի՞նչ կրնար գտնուիլ իր քսակին մէջ. դուշակեցէք, խօսքս ճարտար, պարկեշտ, պատուոյ, վարկի և 44 հազար դահեկան պահանջքի տէր արհեստաւորի համար է. ըսէ՛ք, բան մը ըսէ՛ք. — 20 փարա. Աստուած ալ վկայ, մարդիկ ալ վկայ: Այսպէս գնաց այդ չուսառական մարդը, թողլով ապառաժներու մէջ չինուած տո՛ւն մը, որ երկար տառապեցաւ անիրաւ ձեռքի՛ մը՝ զրկանաց տակ, եւ իր արեան վրէժխնդիր մը՝ ամպերուն ու կայծակին ետեւ:

Դ

Մեր ժողովուրդի հաւատքն է թէ «տուն քակողը տուն չ'ունենար»: Ո՛րչափ ճշմարիտ է այս, չգիտեմ. միայն սոսայտնի է որ երբ վարպետ Ղազար մեռաւ՝ հարիւրներ էին որ «վախ» կ'ըսէին, իսկ երբ իր Աղան մեռաւ՝ ոսկիներու, սիրականներու աւերակացը տակ, խաներու մէջ բաժակներ պարպեցին: Հիմա Ղազար վարպետի Մանուկը իր հօրը տունը նորոգած է, տառապանքներուն մէջ իր հօրը ծըխանը կանդուն կը միտայ, իսկ Աղային ապարանքներուն մէջ փոշին թաւիչներուն վրայ կը խաղայ: Հիմա երկուքն ալ, աղա ու ծուռայ, պարտական ու պարտապա-

հանջ, Աստուծոյ ձեռքն են, եւ ես ալ ձրի քարտուղար, անոնց պատմութիւնը կը գրեմ: Այո՛, կը հաւատամ ձգմարտութեան որ «յերկնից երեւեցաւ», կը հաւատամ Արդարութեան որ «յերկնից բուսաւ» եւ Ղազար Վարպետի պէս կ'ընդունիմ, որ ՂԱՐԻՊԻՆ ՀԱՌԸ ԶՈՒՏՈՒԻՐ. Ժողովրդին հետ կը կրկնեմ, որ ՏՈՒՆ ՔԱԿՈՂԸ ՏՈՒՆ ԶՈՒՆԵՆԱՐ:

ՀՐԱԹԵՏԻ ՈՂԱՊԵՆ

ՄԵՌԵԼՆԵՐԸ ԿԸ ՍԻՐԵՆՔ ՄԵՔ

Ծիծառը դարձաւ եւ մեր կտուրներու տակ իր բոյնը կը գտնէ՝ արագիւն եկաւ եւ մեր բարտիներուն վրայ կը նստի հիմա. Եփրատի սառերը լուծուեցան, սար, սարաւանդ ծաղիկ ու ծիծաղ կը հագնին, եւ մեր ծովակներն ալ հանգաւորի կը ծիծառն թռուցիկ կապուտակով: Թեթեւ հոգով կը մեր լծվարին տա՛ք երեսներն, եղան ու գովուն ճակտին բաշերը կը շոյէ. ցորենը, գարին, գիւղերու եւ քաղաքներու շուրջը կ'երերան ծալ ծալ:

Ժա՛մ կենաց, ժա՛մ մեռելութեան:

Ամեն երկուշաբթի մեկնելու կամ որ ձիւղն է մեռնելու օր է: Արեգական շողերը հազիւ վար ինկած մեր ծխաններու վրայ, զարիւսին պարկերը, սլայտակները կը կապուին. նորատի հարսնուկն, որ Ս. Սարգիսին ճակատ ճակտի դրած էր եկեղեցւոյ մէջ իր սիրականին հետ, քանի մը վայրկեաններ միայն ունի իր սիրականէն. պառաւ մամիկը, զառամ ծերուկը քար պիտի դնէ իր կուրծքին ու սրտին վրայ, արցունքն ու հառաչքը խեղդելու, խնայելով իր հարսնուկին, որ աւելի ուրիշ փանքի պէտք ունի:

Ժամադրութեան վայրը որոշուած է. ամեն հասակ գիւղին գլուխը կը դիմէ, մանուկ, ծերուկ, հասուն, տհա՛մ վերջին արցունքն եւ ցաւերն իրարու խառնելու:—Ո՛ւր են, պակաս կա՞յ:—Նոր փեսաները չեկան տակաւին, Տէր հայր: Դուռ դրացնի, մանր ու մեծի մնաք բարովէն ետքը, վերջին տեսութիւն մը կայ նորապսակ սիրականներու, արցունքի եւ լացի արարողութիւն մը առանձինն:

Այդ քանի վայրկեաններու մէջ փեսան կ'ուխտէ չմոռնալ իր սիրականը սա-

րերու եւ սորերու ետեւ, հարսը կ'ուխտէ հաւատարիմ մնալ իր ամուսնոյն տարիներու թուոյն մէջ, զոր Աստուած միայն գիտէ որոշ համբել: Այդ բաժանման ցաւերն զգալու համար հարկ չկայ որ մարդ գիտուն կամ կիրթ ըլլայ. կ'զգան մեզի չափ, կը կրեն մեզի չափ, կը յուզուին մեզի պէս. ուխտի արարողութիւնը կ'աւարտի, հարկ է որ արցունքի մէջ «մնաս բարով» ու «երթաս»ը խեղդեն, եւ հարսն իր սիրականին ետեւէն դուռը փակէ, փակէ գուցէ մինչեւ յաւիտեանականութիւն, եւ ամփոփուի տանը մէջ անկուն մը արեւն ու լոյսը չտեսնելու այդ օր, իր հառաչանքները դաշնակելու: Այո, երգեր կան, կրակի երգեր հառաչանքով եւ կակիծով չինուած:

Կ'երթա՞մ. Աստուած քեզի հետ,
Ուղիւ ճամբէն չընկնիս ետ.
Թէ ինձմէ զա՛տ եար սիրես,
Իմ մեղք քու վիզ քարի պէս:

Կ'երթաս, ճամբու գընեմ ե՞ս.
Թող ուրիշներ ճամբեն քեզ.
Շատ աղաչանք Աստուծոյս,
Բայց զուր գընաց ամեն յոյս:

Դուռը ձեռքովդ փակէ,
Դարձիր անգամ մ'էլ նայէ,
Տես թէ ի՛նչպէս ծիծեռնակ
Նըստեր է մեր ցըւքին տակ:

Դարձիր նայէ՛ ծաւերուն,
Չընես կարօտ քու սիրուն.
Մեր խընձորին չըմուռնաս,
Ուր որ առինք սիրոյ դաս:

Օր մը, զարիւսներու հետ քանի մը ժամ ճամբորդելէ ետքը, համատի մանուկներով դարձանք գիւղ եկանք. գիտես թէ գերեզմանոց կը դառնայինք: Դրացնի մը տունը մտանք: Նորատի կին մը—տակաւին բնաւ մոռցած չեմ—քարէ սանդուղին վրայ կարի նստած կը մըմընջէր լալագին: Ընկերս իր մանկիկն էր որ երիտասարդ հօրը յուշարկ գացած էր: Կինը տեսաւ զմեզ, եւ ահա,—անշուշտ աւելի եւս խռոված—ցատքեց իր տեղէն կարօտով գրկեց իր մանկիկն ու անյադ կը համբուրէր. երեսներն ու ձեռքերն հոտոտեց, գանգուր մաղերն ու խաժուկ աչքերը բռնն տարփանօք պազա՛ւ ու

պագաւ : Գիտես թէ տակաւին կը լսեմ այդ համբուրին ձայնը . տեսարանը մըտքիս առջեւ է , մայր եւ մանկիկ իրարու պլլուած : Դառնամ , այս նիւթերու մէջ երկար գեգերիլ կարելի չէ :

«Հրամեցէք , Տէր Հայր , ամենքն ալ եկած են» : Գեղջուկ քահանան քիչ մը բարձրկել կը կենայ . գլխարկները վար կ'առնուին , անշուշտ լռութեան մէջ «Տէր ուղղեա՛ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան»ը կը լսուի , կ'աւարտի : Գրկապինդ փարում , հրաժեշտի ողջոյն , խուռն բաղմութիւնը չարժման եւ յուզման մէջ , կէսն առաջ , կէսն ետեւ , ուղեւորներն ասդին , գիւղացիք անդին : «Տէ՛ր , քալեցէք , տղաք , կէս օր եղաւ» : «Քալեցէ՛ք» , ի՛նչ գիւրիկն է . սիրականդ ձգէ դրան ետեւ , զաւակդ ձգէ որրանին մէջ , ծնողքդ ձգէ գերեզմանին մօտիկ , տունդ ձգէ անտէր անտիրական ու քալէ՛ աշխարհներէ անդի՛ն , ծովերէ անդի՛ն . . . :

Ասոնք գրեւ կարելի չէ : Ես ինքս էլ մանուկ , այդ տեսարանէն անցայ : Տպաւորութիւնս այն եղած է , որ այսօր երկա՛ր տարիներէ ետքը , դարձի հովը ոգիէս կ'անցնի թէ չէ , այդ բաժանման սարսուռն ու կակիծը ամբողջապէս կը կրեմ , մօրս ցանկալի գերեզմանն ալ կը մոռնամ , մեր տունն ալ , գիւղն ալ , ողջ ու մեռած , ամենքն ալ . աչքիս առջեւ կուգայ մեծ պապս , որ զիս բազուկներուն մէջ տուած կ'ըսէր թէ «ալ չպիտի տեսնեմ» , եւ սպիտակ մօրուքը , արցունքով թուրմ , երեսիս ու մազերուս կը քսուէին :

Չատիկէն սկսեալ մինչեւ մայիսի վերջը կը կրկնուին այս աղեկատու տեսարանքը մեր գիւղերու մէջ , եւ հայոց ուժաւոր սերունդը կը փակէ դուռնու դուռս կ'իյնայ հայրենիքէն՝ երթալ ուր որ փչէ ճակատագրին հովը , ջախջախուելու ճողին տակ , կոտորուելու բեռներու ներքեւ , կաշկանդուելու վաշխառուին կապանքներուն մէջ , սպանուելու անյուսութեան մէջ : Ո՛ր Տէր , դու միայն գիտես թէ ճակատագիրն ի՞նչ գրած իր սե ճանկերով :

Այսօր կամ վաղը , եւ ահա ա՛լ ամեն շաբթու Տրապիզոնի շոգենաւը կը թափէ հոս այրած , խոնջ , կարմիր ու թառամ դէմքեր , Վանէն , Մուշէն , Բալուէն , Չար-

սանճաղէն , Բաղէշէն , Քիլիշն , Սեբաստիայէն : Թող դան , բարի հազար բարի , մեր հիւանդանոցը յաջողուելու վրայ է , գաւառացին կուտայ , Պօլսեցին կուտայ . հըրաւէր ալ զրկենք , թող դան , մնացողներն ալ թող դան , հիւանդներուն բժիշկ , մսի ջուր , դեղեր ունինք , մեռելներուն պատանք ու գերեզմանոց ունինք : Իսկ ողջերո՞ւն . — Ոչինչ , ընկերական , մարդասիրական զգացումներէն եւ ոչ իսկ մին :

Ահա տա՛ք օրինակ մը : Այս ձմեռն պանդուխտ հիւանդ մը ունեցանք մեր գիւղին մէջ : Երկու ամիսէն աւելի գիշերապահին հիւղակին մէջ տառապեցաւ . Տոբթ . Գալստեան գթութեամբ այցելած էր միշտ եւ Աղքատախնամ ընկերութիւնը դեղ , մսի ջուր եւ այլն մատակարարած . Շատ լաւ , Աստուած օրհնէ գիրենք , Բայց հիմա այդ երիտասարդ աղէկցած է , բըժիշկը կ'արգելու աշխատիլ եւ կ'ստիպէ որ հայրենիք երթայ իր կորսուած ուժերը վերստին գտնելու : Ի՞նչով պիտի երթայ , ախր մէկ փարա էլ չունի , չոգենաւն ալ ձրի ծառայութիւն չ'ըներ մեզ : 200 դահեկանի պէտք ունի . եւ կը մնայ հոս : Ի՞նչ պիտի ըլլայ վախճանը . — Երիտասարդը վաղիւ կամ միւսն օր կ'սկսի բան մը ընել կը հիւանդանայ վերստին , առջի կարողութիւնը չկայ տոկալու : Աղքատախնամ ընկերութիւնը վերստին դեղ , մսի ջուր եւ այլն կը զրկէ . բայց բժիշկն իւր սեւ վըճիւր կուտայ , եւ երիտասարդը կը մեռնի . կը տանին կը թաղեն զինքը ու այսպէս ամէն զոհողութիւն , զոր մարդասիրաբար տուին , ի դերեւ կ'ենէ , յուժմէտս ծախսուած կ'ըլլան բժշկին մասնաւոր խընամքը , ընկերութեան դեղը , մսին ջուրը , եւ հաշուական տետրակին մէջ կը մնայ այսչափ ծախք պանդուխտ երիտասարդի մը համար , գանձանակով , պնակով , բաժնեգիններով գոյացեալ : Ի՞նչ եղաւ : Այս պատճառաւ է որ բնաւ չպիտի կարենամ հաշտուիլ այս դաղափարին հետ թէ մեր հիւանդանոցք պանդուխտներու համար բան մը կ'արժեն : Մենք կը սիրենք մեռելները գերեզմաններու հողը պարարտացընելու :

ՀՐԱՆԴ

Պ Ա Տ Ո Ւ Ե Ր

Մի՛ ըսեր, թող անյայտ մընայ,
Մըտերմիդ՝ քոյ կուսին անուն,
Զի մի՛ գուցէ, երբ ժպտի նայ,
Սրտիկդ ըզգայ մի վիշտ անհուն:

Մի՛ վստահիր զանի թուղթին,
Երբ ուզես սէրդ հեղուկ ի գիր,
Զի կան աչեր գիտող չորս գին,
Հոգւոյ գաղտնեաց հետաքրքիր:

Մի՛ գըրեր զայն արեւուն տակ
Վերայ հողուն կամ աւազին.
Քունդ իսկ չ'ըլլայ անոր գիտակ,
Զի խմաց տայ քոյ երազին:

Մի՛ ըսեր զայն և այն ծաղկանց
Որք իւր ճակտէն վար անկանին.
Եւ—թէ մեռնի՛ս իսկ սիրախանձ—
Մի՛ ըսեր զայն ցուրտ դամբանին...:

Զի՛ գաղտնապահ՝ չի՛ք բարեկամ,
Ո՛չ ալ անխօս ծաղկունք, բոյսեր,
Ո՛չ ապահով թղթի՛կ մ'անգամ
Որք չը մատնեն պըւէտին սէր:

Ո՛չ ջուրք այնքան սաստիկաբախ որ
Սրբեն գետնէն հետքն իւր դըրոց.
Զի ո՛չ քունն է բաւական խոր,
Ո՛չ չիբիմն ալ՝ բաւական գոց...:

ԵՕԺԵՆ ՄԱՆԻԻԵԼ
Թարգմ. ԱԼՓԱՍԼԱՆ

ՎԱՆԴԱԿԵՆ ԴՈՒՐՍ

(ԺԴ. ՆԻՍՏ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ)

Ազգային ժողովը վերջապէս բացաւ իր
դռները, որք ամիսներէ ի վեր փակ մնա-
ցած էին մեր՝ ամպարչտացս՝ երեսին: Շի-
ջեւափառ կանթեղին վերջին ցոլքն էր այդ
սակայն, որ, մարելէ առաջ, վերջին պայ-
ծառութեամբ մը կը փայլէ: Ազգային ժո-
ղովն իր դռներն բանալն ու գոցելը մէկ
ըրաւ: 89-90 տարւոյ նստաշրջանին վեր-
ջին նիստն էր այն:

Ատեանին բացումը ժամը 6ին որոշ-

ուած է: Ժամը եօթն անցած է, և դեռ
նիստը չ'սկսիր: Ժողովը բանալու համար՝
36 երեսփոխաններու ներկայութիւնն ան-
հրաժեշտ է, և սակայն դեռ հազիւ երե-
սուն երեսփոխան եկած են: Սովորական
նախերգանքն է այս այն ընդհանուր խառ-
նակաձայն նուագահանդէսին որ Ազգային
Ժողովոյ գումարում կը կոչուի: Ունկն-
դիրները եկած լեցուած են: Երեսփոխան
Տեարք, խումբ խումբ բաժնուած, կը խօ-
սին ու կը խնդան: Դուրսը, նրբանցքե-
րուն մէջ, դիւանադպիրն ու բարապան-
ները կը լրտեսեն իւրաքանչիւր ոտնաձայն,
սպասելով այն նախախնամական էականե-
րուն, որք պիտի դան լրացնել բաղձոց-
եալ թիւը: Ազգային ժողովոյ գործերուն
տեղեակ անձ մը կ'ըսէ թէ ատենանք ո՛ր-
չափ ուշ սկսի, այնչափ ազդին նպաստա-
ւոր է. իւրաքանչիւր ժամ որ կ'անցնի՝
300 ջրջ. կը շահեցնէ Պատրիարքարանին,
որովհետեւ մէկ ժամուան ատենագրու-
թիւնը՝ մէկ ֆոթա կ'ընէ տպագրութեան
մէջ:

Եւ սակայն այսպէս սպասելով գործ-
չլիննար: Մէկ մըն ալ կը տեսնենք թէ
բարապանները դուրս կ'ելլեն և կը ցըր-
ուին: Վերոյիշեալ անձը խոստովանաբար
լինձ կ'ըսէ թէ բարապաններուն հրաման
տրուած է երթալ այն երեսփոխաններուն
որք մօտերը գրասենեակ ունին, և, ի
հարկին բռնութիւն իսկ բանեցնելով, ա-
տոնց օձիւքէն բռնել ու ժողովի բերել:
Այս գերադոյն տնօրինութիւն իր բարե-
րար արդիւնքը կ'ունենայ անշուշտ. ո-
րովհետեւ կէս ժամ յետոյ ժողովը բաց-
ուած կը յայտարարուի: Շատերը եկած
իրենց ստորագրութիւնը միայն դրած ու
անմիջապէս «կծկած» են. բայց օրէնքն իր
տեղը գտած է:

Ատենական գործողութիւններ կան,
բացակայութիւններ կամ հրաժարումներ,
այնչափ սովորական որչափ «Տիգրան Յա-
րութիւնեանի սրճարանին հացադինը» Ազ-
գային Հիւանդանոցին նուիրատուութեանց
ցանկին մէջ: Անփութօրէն ունին կը դը-
նենք, երբ ահա յանկարծ. . . ո՛վ զար-
մանք. . . բայց այն մարդը գրե՛լ ալ
գիտէ եղեր, իմ ծերունիս, իմ աւանդա-
կան ծերունիս որ Ազգային ժողովոյ սրա-
հըն յարմարագոյն ննջարան մըն է ընտ-

րած իրեն համար յիշեցի՞ք արդեօք: Ժողովոյ Դիւանը զայն անդամ կարգեր է Երուսաղեմի Միաբանութեան հաշիւները քննելու համար կարգուած յանձնաժողովին: Խեղճ ծերունին, գործելու եռանդէն բռնուած, այն մեթոտական կանոնադրութեամբ որ Ազգային ժողովոյ ոչ մէկ նստէն ետ կը կեցնէ զինքը, ամէն անգամ կը համակերպի իրեն ուղղուած հրաւերներուն ներկայ գտնուելու համար յիշեալ յանձնաժողովին եւ բանը գործը թողած ժամադրութեան տեղին կ'երթայ. . . Բայց, իրմէ զատ ո՛չ ոք եկած է: Մէկ կ'ըլլայ, երկուք կ'ըլլայ, երեք կ'ըլլայ, ձայն չի հաներ. չորրորդին ա'լ համբերութիւնը կ'սպառի, եւ Ազգային ժողովոյ ատենապետին նամակ մը գրելով իրողութիւնը կը պատմէ տեղն ի տեղօքը, խնդրելով «տնօրինել զարժան» Որոշումը կը գուշակէք անշուշտ. նոր նամակ մը պիտի զրկուի Յանձնաժողովոյ միւս անդամներուն որպէսզի ժամ առաջ գումարուելով կատարեն իրենց յանձնուած պաշտօնը: Վստահ եղէք թէ խեղճ ծերունին նորէն պիտի երթայ, նորէն մարդ չպիտի գտնէ, դարձեալ ու դարձեալ պիտի երթայ, դարձեալ ու դարձմարդ չպիտի գտնէ, և սակայն վերստին պիտի երթայ: Ո՛վ գերազոյն ստորանք, զոր մանուկներն և ծերերն ունին միայն:

Ելմտացոյցի վիճաբանութիւնը կը բացուի հիմակ: Բայց լաւ հասկնանք: Խնդիրը ապագայ ելմտացոյցին վրայ չէ, այլ 1888-89 և 1889-90 տարիներու ելմտացոյցին վրայ որք արդէն գործադրուած լինցած են: Մեռած մարդուն դեղ տալ ուղեւ չը՞նմանիր այս: Այս ամբողջ վիճաբանութեան մէջ, դիտողին համար թէ ուշագրաւ բան մը կայ, այն ալ իւթիւճեան Կարապետ էֆէնտինն եւ Չօպանեան Միհրան էֆէնտինն դէմքերն են: Իւթիւճեան էֆէնտինն գլխադէրը կծկման այն աստիճանին հասած են ուսկից անդին անհնար է երեւակայել. պէ խելը կ'սկսի քաշել, մէկ մը ասդին ու անդին նայիլ, կարծես փուշերու վրայ նստած է. իր նայուածքը եւ շարժումներն այն քամահրանքն ունին, որ իրեն դէմքին ամէնէն զօրաւոր արտայայտութիւններէն մին է: Իսկ Չօպանեան էֆէն-

տին անխուով կեցած է, բարձրէն նայելով, ինքզինքը զերծ ցոյց տալով այն շանթերէն որք իր և իր բարեկամին գլխուն վերեւ կը պտուտաքին: Երկուքն ալ երեւոյթն ունին մտածելու թէ այդ նորեկը ո՛ւսկից բուսաւ:

Նազարեան Տիրան էֆէնտին, ելմտացոյցի յանձնաժողովին անդամներէն մին՝ որ ելմտացոյցը կը քննադատէ, նորերէն է և սկսած է ճլտորիլ: Բարեբաղդութիւն մըն է այս: Ա'լ ձանձրացանք ամէն նստի մէջ միւսնոյն ատենաբաններուն միւսնոյն շեշտերը լսելով: Ժողովականաց մէջ անոնցմէ դուրս բաւական մարդիկ կան թէեւ, բայց ուսողութեան մէջ «զանցաւելի քանակութիւն» անուանուած բանն են: Սրահէն ներս կը մտնեն, տոմարին մէջ ստորադրութիւննին կը դնեն, կ'երթան իրենց տեղը կը բազմին երկու երեք ժամ անխախտ, յետոյ կը թողուն կ'երթան, հանգիստ խղճով, իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարած ըլլալու խորին գիտակցութեամբ: Իրաւ է սակայն որ եթէ այդ երեսփոխաններն ալ Գուրգէն էֆէնտինն կամ Սուրէնեան էֆէնտինն պէս խօսող ու շատցրուց ըլլալին. . . ո՛հ, մտածելն անգամ սոսկում կը պատճառէ ինձ. . .

Նազարեան Տիրան էֆէնտինն յետոյ, խօսք կ'առնու Գուրգէն էֆէնտին, և անմիջապէս աչքի կը զարնէ իրենց խօսելու տարբերութիւնը: Մին ջրի պղտոր ընթացքն է որ կը գլորի գայլախաղներ վարելով, միւսը լայն ու յստակ գետն որ կը սահի մեծաշուք: Ուստի, Պէրպէրեան էֆէնտինն շատ դիւրին յաղթանակ մը ունեցաւ Նազարեան էֆէնտինն խօսքերը քննադատելով, առանց իսկ ի նկատ առնլու այն ճնճղուկին ողորմուկ շեշտնորով կը յայտնէր թէ խօսելու դիւրութիւն չունէր շատ և թող տային որ ուղածին պէս բացատրէր իր գաղափարները:

Բայց ճնճղուկը ուտող բազէն վեր, արծիւը կայ. այդ արծիւը, Ղազարոսեան Գրիստոստուր էֆէնտինն եղաւ:

— Հէ՛յ, կ'ըսէ Պէրպէրեան էֆէնտինն, դառնալով, չ-՛է-՛ չ-՛է-՛ խօսեցար, հիմակ ալ կարգը ինձի եկաւ:

Եւ որովհետեւ Պէրպէրեան էֆէնտինն կը խնդայ, ինչպէս ամէնքն ալ, Գրիստոս-

տուր էֆէնտին կը ձայնէ .

—Մի՛ խնդար, լս'ց , («Անօրէն»ը միտքէն կը յաւելլու անշուշտ) :

Եւ կ'սկսի խօսիլ... եթէ «խօսիլ» կ'ըսեն այն բառերու թաւալգլոր խառնակոյտին որ իր բերնէն կը թափթփի անյօդ և անկապ , ծիծաղ ու արգահատանք շարժելով միանգամայն : Այս ելմոացոյցի խնդիրն այնչափ հին է որ ժողովոյն ատենապետ Տօքթ. Թիրեաքեան կը հարցունէ Քրիստոստուր էֆէնտին թէ ի՛նչ հանգամանքով կը խօսի , ինքն իսկ մոռցած ըլլալով թէ հնադարեան երեսփոխանը տեղեկարե՛րն է ելմոացոյցի յանձնաժողովին :

Բայց այն ի՛նչ ձայն է որ կը բարձրանայ յանկարծ եկեղեցական երեսփոխանաց կարգերէն : Տ. Վահան վարդապետ Յակոբեանն է որ ոտքի կանգնած է : Քրիստոնէութեան տառջին տարիներու նահատակներուն պէս , խորոյկի մը վրայ հանած են զինքը կարծես , և անկից բողոք կը բառնայ կրօնի նկատմամբ ցոյց տուած անտարբերութեան դէմ : Հաւատացեալի համոզեալ շէշտեր ունի , աչքն ի յերկինս պնդեցեալ և այդ եկեղեցականներու խմբին մէջ որք զինքը շրջապատած են , կրօնական նիւթեր սիրող նկարչի մը համար հազուադէպտ պատկեր մը կրնար ըլլալ :

* * *

Ելմոացոյցի վիճաբանութիւնն աւարտած է , կրթական խնդիրն օրաձգուած , և ատենապետը կը պատրաստուի փակման ճառն արտասանել , երբ , նստարաններուն ետեւէն , խորէն , ոտք կ'ելլէ Ալաճաճեան Համարձու՛մ էֆէնտին : Անդր ու խտտափար դատախազի մը պէս , կը հարցունէ թէ ո՛վ է փոխեր ժողովոյ օրակարգը , առանց երեսփոխանաց գիտութեան : Զայնը մեղմ է , եւ բառերը հատիկ հատիկ կ'ելլեն իր շրթունքէն : Իր ուղղանկիւն և անխլուած այտերը , ակնոցներու ետեւ սքօղուած լայն ու խոշոր աչուները և բարեքիկ շարժումները՝ չատոնց է մոռցուած էին Ազգային ժողովոյ մէջ : «Պէ՛տք է որ , պէ՛տք է որ» , եւ այս պէտքերուն վրայ սցնալիսի շէշտ մը կը դնէ որ իւրաքանչիւրին իր պարտքն յիշեցնող , անխառնութիւնները ձողկող և սը-

խալները մատնանիշ ընող խիստ բարոյախօսի մը դէմը կը կարծես ինքզինքդ :

Ատենապետ Տօքթոր Թիրեաքեան էֆէնտին կը կարգայ հիմակ իր փակման ճառը : Մեծ պահոց իրիկունները դըտնուե՞ր էք եկեղեցին , երբ սարկաւազը Յայամաւորքը կը կարգայ , «Արեգի ԺԳ և Մեհեկանի ԺԵ» , խուլ ու խորունկ ձայնով մը :—Երբ կարգը կուգայ թուելու ժողովի օրակարգէն անցած խնդիրները , ա՛լ չեմ դիմանար և մտքովս ես ալ կը ձայնակցիմ Ատենապետ էֆէնտին , «հալին մեղք , հալածին դեւք , խղին կապանք , խորտակին շղթայք , կենդանածնին մահացեալք» :

Փակման ճառին բոլոր տեսողութեանն ատեն ուշադրութիւնս կը գրաւէ Ռէթէոս էֆ Թադէոսեանի անհանդարտ նստուածքը , ատենաբանին իւրաքանչիւր վերջակէտին տեղէն ելլելու շարժում մը կ'ընէ ու նորէն կը հանդարտի : Եւ ահա հազիւ ճառն աւարտած ու նախադաճին բերնէն աղօթքի վերջին բառն ելած է , տեղէն կը շարժի և խորխոր կերպով մը .

—Ե՛րբ է յաջորդ նիստը :

Իր պարտքը կատարած է եւ նորէն տեղը կը նստի : Բան մը ընելու է վերջապէս աղգին շահուն համար , և Թադէոսեան էֆէնտին ալ այս միջոցը գտած է իր աջակցութիւնը նուիրելու Ազգային ժողովին :—Գիտեմ ուրիշ երեսփոխան մըն ալ որ ուրիշ միջոց մը գտած էր ժողովին օգտակար ըլլալու : Կը յիշէք թէ Ներքին կոնսնագրի համար մէկ ժամ վիճաբանութիւն որոշուած էր , այդ երեսփոխանն՝ իր ժամացոյցը Ենի-Չամիի ժամացոյցին վրայ լարելով՝ նստերուն կուգար , և երբ վիճաբանութիւնը ժամուան մօտենար , անմիջապէս ժամացոյցը կը հանէր եւ ,

—Մէ՛կ ժամը լրացաւ , Ատենապետ էֆէնտին ,

Կ'ըսէր ու տեղը կը նստէր :

Թո՛ղ խիղճդ հանդարտ ըլլայ , Թադէոսեան էֆէնտին , իրական ծառայութիւն մը կը մատուցանես ազգիդ :

Եւ եթէ ժամանակակիցներդ իսկ չեն կարող գնահատել քու անձնուէր եւ եւանդուն ծառայութիւններդ , վստահ եղի՛ր որ Սրբուհի Մայրապետը երկնքէն

կը տեսնէ՝ քու գործերդ և կ'օրհնէ՝ ըզ-
քեզ, Գնա', և արդարոց քունը քնացիր,
աղբին բարւոյն համար աշխատող մարդու
հանդարտ ու պայծառ խղճով:

*
*

Ժողովէն կ'ելլենք ու նրբանցքին մէջն
ենք, երբ պատուհանին մօտ երկու երես-
փոխանաց խօսակցութիւնն ականջին կը
հասնի:

—Նայէ', նայէ', սա բակին մէջ մարդ
մը կ'անցնի, ճիշդ Արփիար Արփիարեանին
կը նմանի:

—Ո՛ւր է:

—Եկեղեցին մտաւ:

—Եկեղեցի՞ն մտաւ. ուրեմն ան չէ, կը
պատասխանէ միւսը:

ԹԱՓԱՌԻԿ

Արփիար էֆ. Արփիարեան նախորդ չո-
րեքշաբթի ուղեւորեցաւ ի վենետիկ, ներ-
կայ գտնուելու Հայր Ղեւոնդ Ալիշանի
գրական գործունէութեան յիսնամեկին:
Ազրիականի խորհրդաւոր կզգին, Ս. Ղա-
զար, իր գրագէտ և հնախոյզ կրօնաւոր-
ներուն վարած կեանքովն ու գրական ար-
տադրութեամբը, կարեւորութիւն ունե-
ցած է մեր կեանքի մէջ: Ս. Ղազարու
Միաբանութեան կարեւորագոյն անդամը,
ի հանդէս բերած են յաջա աշխարհի թէ
հայ մտքի ծաւալը մինչեւ ո՛ւր կը հասնի,
թէ որչափ բան կարող է մթերել ու ար-
տադրել վանքի ստուերներուն տակ:
Հայր Ղեւոնդ Ալիշան նշանաւորագոյնե-
րէն է, և զուցէ միակն այսօր Ազրիակա-
նին մէջ, տարիներու, գրական բազմա-
գիւյն գործոց մէջ և սպիտակ մագերու
տակ: Արփիարեան էֆ. կ'երթայ Ալիշանի
գործունէութեան յիսնամեկի առթիւ ա-
նոր գրական և բեղմնաւոր կեանքի հան-
դէսը տօնելու: Կ'արժէր այս:

Արփիարեան էֆէնտիի այս ուղեւորու-
թիւն, իր համակրական նպատակէն զատ,
սա օգուտն ալ պիտի ունենայ որ իր ու-
ղեւորութեան տալաւորութիւնները և Յօ-
բէլեանի հանդիսին նկարագիրը պիտի տայ
հրատարակութեան Մասիի մէջ: Քսան

տարիէ ի վեր իր բաժնուած վայրերը կըր-
կին անգամ տեսնելէ յետոյ, անտարակոյս
զգայուն շեշտերով պիտի նկարագրէ Ս.
Ղազարու մենաստանն և անդ իր անցու-
ցած ժամերը, որք լի են իրեն համար
սիրալի յիշատակներով:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ
ստացաւ հետեւեալ նորատիպ մատեան-
ները:

Դասագիրք Կրօնի, ուղեցոյց հայ կը-
րօնուսոյցների համար. Նոր-Ուխտի նիւ-
թի մշակութիւնը. Հատոր Բ, Մասն Ա.
աշխատասիրութիւն Սահակ քահանայ Սա-
հակեանցի, Թիֆլիզ:

Սրբազան Պատմութիւն Նոր-Ուխտի.
Հատոր Բ. աշխատասիրութիւն Սահակ
քահանայ Սահակեանցի, Թիֆլիս:

Տարերք Երկրագործութեան, տեսա-
կան և գործնական, երկասիրութիւն Հ.
Մանուէլ Քաջունիի, ի Միթարեան Ուխ-
տէն, վենետիկ:

Արաքս, Պատկերասրահ հանդէս, Բ.
տարւոյ Բ. Հատոր, Խմբագրութեամբ Պ.
Սիմէօն Գուլամիրեանցի, Բեդրսպուրկ:

Արտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ